ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՈՒՄ N 1

ԳՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

**Հոգաբարձուների խորհրդի**

**նիստը նախագահող՝** **Վ. Խաչատրյան**

Գ Ա Վ Ա Ռ Ի   Պ Ե Տ Ա Կ Ա Ն   Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի

# Հ Ո Գ Ա Բ Ա Ր Ձ Ո Ւ Ն Ե Ր Ի   Խ Ո Ր Հ Ր Դ Ի   2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
# Հ Ո Ւ Ն Վ Ա Ր Ի   26-Ի   Թ Ի Վ 1   Ն Ի Ս Տ Ի
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   N 2

## ԳՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
## ՆԱԽԱԳԱՀԻ   ԸՆՏՐՈՒԹՅԱՆ   ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 32-րդ կետով և Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հրանտի Հակոբյանին:

**Հոգաբարձուների խորհրդի**

**նիստը նախագահող՝** **Վ. Խաչատրյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՈՒՄ N3

## ԳՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Սամվելի Մարգարյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Հ. Հակոբյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՈՒՄ N 4

## ԳՊՀ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ

## ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետով և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի ռեկտորի ընտրության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. ‹‹Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:

3. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել՝ ԳՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

4. ԳՊՀ ռեկտորի ընտրությունն անցկացնել 2017թ. փետրվարի 25-ին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Հ. Հակոբյան

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ‹‹ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

## ՌԵԿՏՈՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ք. Գավառ** **25.02.2017թ.**

Ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետի, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետի և ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի 5.17-րդ կետի ա) ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները՝

Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. ‹‹Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր ընտրել իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռուզաննա Խաչիկի Հակոբյանին:

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կրթության պետական կառավարման լիազոր մարմնին՝ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:

‹‹Գավառի պետական համալսարան» հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Հ. Հակոբյան